ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

**Հավելված N 1**
**Հայաստանի Հանրապետության**
**պետական եկամուտների կոմիտեի**
**նախագահի 2020 թվականի**
**մայիսի 27-ի N 477-Ն հրամանի**

**Օրինակելի ձև**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
30.05.2022 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
***«ՄԱՐԴԸ ԿԱՐԻՔԻ ՄԵՋ» ԲՀԿ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ***
հասարակական կազմակերպության 2021 թ. գործունեության մասին

| | |
|---|---|
| **1. Հասարակական կազմակերպության՝** | |
| 1.1 Լրիվ անվանումը | «ՄԱՐԴԸ ԿԱՐԻՔԻ ՄԵՋ» ԲՀԿ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ |
| 1.2 ՀՎՀՀ-ն | 02608919 |
| 1.3 Գտնվելու վայրը | ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ Փ. 33 ԲՆ. 83 |
| 1.4 Պետական գրանցման համարը | 211.060.116293 |
| 1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | 2012-06-19 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | +(374)10256325 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | www.armenia.peopleinneed.global |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | info@fredallc.am |

**2 Գործադիր մարմնի ղեկավարի՝**

| Անունը | Ազգանունը | Պաշտոնը |
|---|---|---|
| ՎԱՐԴԻԹԵՐ | ԴԱԴՈՒՆՑ | Հայաստանյան գրասենյակի ղեկավար |

3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը

Ներկայացուցչության գործունեության առարկաները՝ Հայաստանի Հանրապետության տարածքում Ընկերության բոլոր նպատակների, խնդիրների և շահերի ներկայացումը, ներկայացուցչության գործունեության հիմնական տեսակներն են  ներկայացուցչական ֆունկցիաների կատարումը որը իր մեջ ներառում է օգնության և զարգացման աջակցության ապահովում, մարդու իրավունքների հիմնարար ազատությունների պաշտպանություն, սոցիալ ինտեգրման ծրագրերի իրականացում, տեղեկատվական և ուսուցողական գործունեության ապահովում:

Ներկայացուցչությունը Ընկերության ցուցումներով իրավունք ունի իրականացնել նաև որոշակի տնտեսական գործունեություն՝ աջակցել տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների ներմուծմանը Հայաստանի Հանրապետություն  ապրանքային շուկաների ուսումնասիրում, Հայաստանի Հանրապետությունում ներմուծումների և արտահանումների գործունեության համար հնարավորությունների ուսումնասիրություն և համագոնծակցություն,

համագործակցություն արտասահմանյան և համատեղ ձեռնարկությունների հետ, աջակցել երկրների միջև առևտրա-տնտեսական կապերի զարգացմանը, ընկերության շահերի ներկայացում ու պաշտպանություն, գործունեության իրականացումը սույն Կանոնադրությանը համապատասխան, հասարակությանը օգտակար նպատակներով, տեխնիկայի հետ կապված ցանկացած սարքավորումների ներմուծում և արտահանում, այլ ապրանքների արտահանում և ներմուծում, առևտրային միջնորդություն մարկետինգ:

| | |
|---|---|
| **4 Հասարակական կազմակերպության՝** | |
| 4.1 Անդամների թիվը | |
| 4.2 Կամավորների թիվը | |
| 5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը | 0 |

**6. Իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 6.1 Ծրագրի անվանումը | 6.2 Վայրը | 6.3 Նպատակը | 6.4 Կարգավիճակը |
|---|---|---|---|---|
| 1 | Քաղաքացիական հասարակության դերակատարները  որպես փոփոխությունների կրողներ Հարավային Կովկասում և Մոլդովայում | Հայաստան | Աջակցել քաղաքացիական հասարակական կազմակերպություններին իրատեսական ռազմավարական և զարգացման պլանների մշակման գործում: | Ընթացքի մեջ |
| 2 | ԵՄ COVID-19 հետևանքների չեզոքացման աջակցության ծրագիր Արևելյան գործընկերության երկրների համար | Հայաստան | Աջակցել քաղաքացիական հասարակության կազմակերպություններին՝ արձագանքելու COVID-19 համավարակի անմիջական և երկարաժամկետ ազդեցություններին: | Ընթացքի մեջ |

Digitally signed by
GHAZARYAN
VREZH
3302790465
Date: 2022.10.28
15:18:03 AMT

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | ԵՄ-ն Շիրակի մարզի համար նոր աշխատատեղեր շնորհիվ բրդի արտադրության | Շիրակի մարզ | Շիրակի մարզում բրդի արժեշղթայի զարգացում ու մոդերնիզացիա: | Ավարտված |
| 4 | ԵՄ-ն զբոսաշրջության զարգացման համարակածային տուրիզմի զարգացում պատմական Սյունիքում | Սյունիքի մարզ | Սյունիքի մարզում տուրիզմի զարգացում քայլարշավային արահետի կառուցման միջոցով: | Ավարտված |
| 5 | Անցում կրթությունից՝ աշխատաշուկա | Շիրակի մարզ | Միջին մասնագիտական կրթության և ուսուցման հաստատությունների և մասնավոր սեկտորի միջև սիներգիայի բարելավում: | Ավարտված |
| 6 | Աջակցություն կամավոր վերադարձող միգրանտների վերաինտեգրմանը աշխատանքի, սոցիալական աջակցության և բիզնես դրամաշնորհի միջոցով | Հայաստան | Աջակցելու Ֆրանսիայից և Գերմանիայից Հայաստան վերադարձած միգրանտների վերաինտեգրմանը: | Ընթացքի մեջ |
| 7 | Հումանիտար աջակցություն հակամարտությունից տուժած խոցելի խմբերի համար | Հայաստան | Հումանիտար աջակցության տրամադրում հակամարտությունից տուժած խոցելի խմբերին հրատապ կարիքների համար ներառյալ կացարանի պայմանների բարելավում, խնամքի պարագաների տրամադրում, հոգեբանական աջակցություն | Ավարտված |
| 8 | Հումանիտար աջակցություն հակամարտությունից տուժած խոցելի բնակչության համար | Հայաստան | Աջակցել Հայաստանում հակամարտությունից տուժած բնակչությանը ապահովելով հիգիենայի և ճամռակացի համար անհրաժեշտ պայմաններ, ինչպես նաև օգնել կանխել և մեղմացնել COVID-19-ի տարածումը: | Ավարտված |
| 9 | Արագ արձագանքում խնամքի պարագաների տրամադրում Հայաստանում հակամարտությունից տուժած բնակչությանը | Սյունիքի մարզ | Միանվագ աջակցություն ցուցաբերել հակամարտությունից տուժած և հյուրնկալող խոցելի ընտանիքներին տրամադրելով նրանց խնամքի համար անհրաժեշտ պարագաներ: | Ավարտված |
| 10 | Մանկական Զարգացման Կենտրոններ | Սյունիքի մարզ | Հիմնել և գործարկել մանկական զարգացման 7 կենտրոն Գորիս քաղաքում և հարակից գյուղական բնակավայրերում | Ավարտված |
| 11 | REACT Հակամարտությունից տուժած անձանց հումանիտար աջակցության և ինտեգրման ծրագիր | Հայաստան | Տրամադրել հումանիտար աջակցություն հակամարտությունից տուժած բնակչությանը և նպաստել նրանց սահուն տնտեսական ինտեգրմանը: | Ընթացքի մեջ |

**7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 7.1 Ծրագրի անվանումը | 7.2 Վայրը | 7.3 Կարգավիճակը | 7.4 Նպատակը | 7.5 Հիմնական արդյունքները |
|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | |

**8. Տարեկան մուտքեր՝**

| | |
|---|---|
| 8.1 Դրամական միջոցները | 2,713,752,068 |
| 8.2 Գույքը | |
| Ընդամենը | 2,713,752,068 |

**9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ**

| Հ/Հ | 9.1 Դրամական միջոցները | 9.3 Ստացման աղբյուրները |
|---|---|---|
| 1 | 10,941,286 | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն |
| Հ/Հ | 9.2 Գույքը | |
| 1 | | |
| Ընդամենը | 10,941,286 | |

**10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝**

| | | |
|---|---|---|
| 10.1 Դրամական միջոցները | | 2,171,503,795 |
| 10.2 Գույքը | | |
| Հ/Հ | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 2,171,503,795 |

**11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝**

| | | |
|---|---|---|
| 11.1 Դրամական միջոցները | | 10,941,286 |
| 11.2 Գույքը | | |
| Հ/Հ | 11.2.1 Տեսակը | 11.2.2 Արժեքը |

| | | |
|---|---|---|
| 1 | | |
| Ընդամենը | | 10,941,286 |

**12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝**

| Հ/Հ | 12.1 Տեսակը | 12.2 Ստացված շահույթը | 12.3 Շահույթի օգտագործումը |
|---|---|---|---|
| 1 | | | |
| Ընդամենը | | 0 | |

Նշումներ

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ ________0________ էջից
Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար ____________________
ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ ____________________
ստորագրություն, անունը, ազգանուն

«ՄԱՐԴԸ ԿԱՐԻՔԻ ՄԵՋ»

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
Մայիս 2022թ.

Բովանդակություն

Էջ

Անկախ աուդիտորի եզրակացություն ....................................................................................................3

Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվություն .......................................4

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ.....................7

*«ԱՅ ԷՖ ՓԻ» ՍՊԸ*
*ՀՀ, Երևան, Կոմիտասի պ. 49/3*
*E-mail: info@ifp.am*
*Հեռ +(374) 99 26 77 77*

MAKE SUCCESS INTO A RULE

*"IFP" LLC*
*49/3 Komitas Av., Yerevan, RA*
*E-mail: info@ifp.am*
*Tel. +(374) 99 26 77 77*

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Մարդը կարիքի մեջ» Բարեգործական հասարակական կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության ղեկավարությանը

**Կարծիք**

Մենք աուդիտի ենք ենթարկել «Մարդը կարիքի մեջ» Բարեգործական հասարակական կազմակերպության ("ՀԿ") 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հանրային միջոցների ֆինանսավորման վերաբերյալ հաշվետվությունը («Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվություն», «Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություն» կամ «Հաշվետվություն»):

Մեր կարծիքով, կից ներկայացված հաշվետվությունը բոլոր էական առումներով պատրաստված է համաձայն Հայաստանի Հանրապետության Պետական Եկամուտների Կոմիտեի Նախագահի 2020թ. մայիսի 27-ի N 477-Ն հրամանով սահմանված պահանջների («ՀԿԳՀ պահանջներ»):

**Կարծիքի հիմք**

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության *Աուդիտորի պատասխանատվությունը հատուկ նպատակներով ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*/բաժնում:

Մենք անկախ ենք ՀԿ-ից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՍՄԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

**Հանգամանքի շեշտադրում – Հատուկ նպատակների հայեցակարգով հաշվետվությունների պատրաստում**

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում հաշվետվությանը կից ծանոթագրություն 2-ին, որտեղ ներկայացված է, որ այս հաշվետվությունը պատրաստված է ՀԿԳՀ պահանջների համապատասխան, որի պատճառով, այս հաշվետվությունը կարող է չհամապատասխանել այլ նպատակներով օգտագործման համար:

**Ղեկավարության պատասխանատվությունը հատուկ նպատակներով ֆինանսական հաշվետվության համար**

ՀԿ-ի ղեկավարությունը պատասխանատու է ՀԿԳՀ-ի պահանջների համապատասխան հաշվետվության պատրաստման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել հաշվետվությունը, որը զերծ է խարդախության կամ սխալի արդյունքում առաջացած էական խեղաթյուրումից:

**Աուդիտորի պատասխանատվությունը հատուկ նպատակներով ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ է էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ նրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ՝ ՀԿ-ի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

Մենք, ի թիվս այլ հարցերի, ՀԿ-ի ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին:

"Այ էֆ Փի" ՍՊԸ
23 մայիսի, 2022թ.

Աշոտ Բարսեղյան — Տնօրեն

Անդրեյ Բախշեյան — Աուդիտի ղեկավար

«Մարդը կարիքի մեջ» Բարեգործական հասարակական կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության ("ՀԿ")

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
Հանրային միջոցների ֆինանսավորման վերաբերյալ հաշվետվություն

| | | |
|---|---|---|
| 1. | **Հասարակական կազմակերպության՝** | |
| 1.1 | Լրիվ անվանումը | «Մարդը կարիքի մեջ» Բարեգործական հասարակական կազմակերպություն, հայաստանյան ներկայացուցչություն |
| 1.2 | ՀՎՀՀ-ն | 02608919 |
| 1.3 | Գտնվելու վայրը | ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովայի 33 |
| 1.4 | Պետական գրանցման համարը | 211.060.116293 |
| 1.5 | Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | 19.06.2012 |
| 1.6 | Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | +(374) 60 519159 |
| 1.7 | Պաշտոնական ինտերնետային կայքը | https://armenia.peopleinneed.global/hy/ |
| 1.8 | Էլեկտրոնային փոստը | info.armenia@peopleinneed.cz |
| 2. | **Գործադիր մարմնի ղեկավարի՝** | |
| | Անունը՝ Վարդիթեր Ազգանունը՝ Դադունց | Պաշտոնը՝ Հայաստանյան գրասենյակի ղեկավար |
| 3. | **Կանոնադրությամբ սահմանված գործունեության՝** | |
| 3.1 | Առարկան՝ | |
| | Հայաստանի Հանրապետության տարածքում՝ Չեխիայում գտնվող «ՄԱՐԴԸ ԿԱՐԻՔԻ ՄԵՋ» ԲՀԿ մայր կազմակերպության բոլոր նպատակների, խնդիրների և շահերի ներկայացումը: | |
| 3.2 | Նպատակը՝ | |
| | Ներկայացուցչական ֆունկցիաների կատարումը, որը իր մեջ ներառում է. օգնության և զարգացման աջակցություն, մարդու իրավունքների պաշտպանություն և սոցիալական ծրագրերի իրականացում: Ունի նաև որոշակի տնտեսական գործունեություն իրականացնելու իրավունք: | |
| 4. | **Հասարակական կազմակերպության՝** | |
| 4.1 | Անդամների թիվը | - |
| 4.2 | Կամավորների թիվը | - |
| 5. | **Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը** | - |

| 6. | Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝ | | | | |
|---|---|---|---|---|---|
| /Հ | 6.1 Ծրագրի անվանումը | 6.2 Վայրը | 6.3 Կարգավիճակը | 6.4 Նպատակը | 6.5 Հիմնական արդյունքները |
| | ԵՄ-ն Շիրակի մարզի համար. նոր աշխատատեղեր՝ շնորհիվ բրդի արտադրության | Շիրակի մարզ | Ավարտված | Շիրակի մարզում բրդի արժեշղթայի զարգացում ու մոդերնիզացիա | Հիմնադրվել է Ամասիայի բրդի գործարանը և Շիրակի մարզում ֆինանսավորվել են բրդի արժեշղթայում գործող ՓՄՁ-ներ |

| 7. | Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ՝ | |
|---|---|---|
| /Հ | 7.1 Ստացման աղբյուրները | 7.2 Դրամական միջոցները |
| | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | 10,941,286 |
| նդամենը | | **10,941,286** |

| 8. | Հանրային դրամական միջոցները և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝ | |
|---|---|---|
| 8.1 | Դրամական միջոցները | 10,941,286 |
| 8.2 | Գույքը | |
| /Հ | 11.2.1 Տեսակը | 11.2.2 Արժեքը |
| | - | - |
| նդամենը | | **10,941,286** |

| 9. | Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝ | | |
|---|---|---|---|
| /Հ | 9.1 Տեսակը | 9.2 Ստացված շահույթը | 9.3 Շահույթի օգտագործումը |
| | - | - | - |
| նդամենը | | | - |

23 մայիսի 2022թ.

Վարդիթեր Դադունց
Հայաստանյան գրասենյակի ղեկավար

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
**2021թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ**

## 1. Ընդհանուր տեղեկություններ

«Մարդը կարիքի մեջ» Բարեգործական հասարակական կազմակերպություն, հայաստանյան ներկայացուցչությունը (այսուհետև ՀԿ) իրավաբանական անձ հանդիսացող ոչ առևտրային կազմակերպություն է: Այն ստեղծվել է Չեխիայի Հանրապետությունում գրանցված «Մարդը կարիքի մեջ» Բարեգործական հասարակական կազմակերպության կողմից և հանդիսանում է այդ կազմակերպության առանձնացված ստորաբաժանումը:

ՀԿ-ն գրանցվել է 19.06.2012թ. գրանցման համար 211.060.116293 ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից:

Համաձայն կանոնադրության ՀԿ-ի նպատակն է՝

- Ներկայացուցչական ֆունկցիաների կատարումը, որը իր մեջ ներառում է. օգնության և զարգացման աջակցություն, մարդու իրավունքների պաշտպանություն և սոցիալական ծրագրերի իրականացում: Ունի նաև որոշակի տնտեսական գործունեություն իրականացնելու իրավունք:

ՀԿ-ի գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Սայաթ-Նովայի 33:

## 2. Հանրային միջոցներից ֆինանսավորում

2.1 2018 թ. մայիսի 20-ին, ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը ՀԿ-ի հետ կնքել է «Ազգային համաֆինանսավորման պայմանագիր N. 8»-ը:

Ըստ վերը նշված պայմանագրին, ֆինանսավորման ընդհանուր արժեքը չի կարող լինել ավելին, քան 87,000 եվրո:

Ըստ ՀԿ-ի կողմից 2021 հաշվետու տարվա համար ներկայացված հաշվետվությանը, նույն տարվա համար՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունից ստացված գումարը կազմել է 20,164.18 եվրո:

«Ազգային համաֆինանսավորման պայմանագիր N. 8»-ի համաձայն՝ ՀԿ-ն ստանձնել է.

- «Աջակցություն Հայաստանի Տարածքային Զարգացմանը» դրամաշնորհային պայմանագրի (հղման համար ENPI 2017/394-472 կնքված 21.12.2017թ. Եվրոպական Միության և Չեխական «Մարդը կարիքի մեջ» ԲՀԿ-ի միջև) ֆինանսավորելու գործողության իրականացումը, «Նոր աշխատատեղեր շնորհիվ բրդի արտադրության» տարածաշրջանային զարգացման պիլոտային դրամաշնորհային ծրագրի շրջանակներում (Եվրոպական Միության հղում EuropeAID/150426/DD/ACT/AM):

## 3. Հաշվետվության պատրաստման հիմունք

Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը պատրաստվել է համաձայն ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտեի Նախագահի կողմից 2020թ. մայիսի 27-ի թիվ 477-Ն հրամանով հաստատված պահանջների:

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ՀՀ դրամն է:

## 4. Ստացված հանրային միջոցներ

ա) 2021թ.-ի ընթացքում ՀԿ-ն ՀՀ հանրային ֆինանսավորումից ստացել է հետևյալ դրամական միջոցները.

| Ամսաթիվ | Եվրո | Համարժեք ՀՀ դրամ |
|---|---|---|
| 31.12.2021թ. | 20,164.18 | 10,941,286 |
| **Ընդամենը** | | **10,941,286** |

Գումարի ստացման օրը, ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքը կազմել է՝
1 եվրո = 542.61 ՀՀ դրամ:

**Ֆինանսավորման աղբյուր**

| Ֆինանսավորման աղբյուր | Ընդամենը ՀՀ դրամ |
|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | 10,941,286 |
| | 10,941,286 |

## 5. Օգտագործված միջոցներ

2021թ. ընթացքում ՀԿ-ն ծրագրի շրջանակներում կատարել է հետևյալ ծախսումները.

| Ծախսային հոդված | «Ազգային համաֆինանսավորման պայմանագիր N. 8» ՀՀ դրամ |
|---|---|
| Անձնակազմի վարձատրություն | 7,375,749 |
| Տրված ենթադրամաշնորհներ | 2,414,800 |
| Պայմանագրային ծառայություններ | 1,502,319 |
| Գրասենյակային տարածքի վարձակալություն | 275,000 |
| Առողջության ապահովագրություն | 48,082 |
| Փոխարժեքային տարբերություն | (674,664) |
| **Ընդամենը** | **10,941,286** |

## 6. Դրամական միջոցների մնացորդներ

2021թ.-ի ընթացքում հանրային միջոցներից ստացված գումարի շարժը հետևյալն է.

| | 31-12-21թ. ՀՀ դրամ |
|---|---|
| **Սկզբնական մնացորդ 01.01.2021թ.** | - |
| Ստացված հանրային միջոցներ | 10,941,286 |
| Ծախսված միջոցներ | (10,941,286) |
| **Վերջնական մնացորդը 31.12.2021թ.** | - |

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 28.10.2022 15:17